

կը թաղուի իւրակերտ Ս. Սարգիս եկեղեցիին բակը: Տեսնել իր ընդարձակ կենսագրութիւնը (Չեքրունցի, էջ 175—197):

**ՅՈՎՍԷՓ ԱՆԱՊՍՏԱԿԱՆ, ԿԵՂԱՄՍՅԻ.**— Մը. Բրդի այր կոչուած վանքին. է. դարուն, Քրիստոսուր, Գրիգոր և Սարգիս անուամբ երեք հայերու հետ Արձախէն ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Երուսաղէմ, Անդրէաս երէցի մը ծախքով և հաւանութեամբ իր ազգական Յովհաննէս և Մխիթար կրօնաւորներու. Յովհ. Մկրտչի մասունքը ձեռք բերելու համար. Յովսէփ իր ուխտաւորութեան մասին հետեւեալ կերպով կը խօսի. «Չորայ հասի ի Ս. քաղաքն Երուսաղէմ. և զերկրպագութիւնն անդ կոտարեալ՝ մեծաւ տրամութեամբ դարձայ, վասն զի ամենեքեան էին հաւանեալ ժողովոյն Քաղկեդոնի, որոց ողջոյն անգամ ոչ տըւեալ՝ եկի ի գաւառն իմ Կեղարքունի՝ ի Պուհայ վանս. յորում տեղեակ ի մանկութենէ էի լինել անդ մասին նշխարաց Յովհաննու. և յոյժ տենչանօք հայցեցի ի Կրիգորիկայ սպասաւորի սրբոյն. և ողորմութեամբն Աստուծոյ հաւանեալ նորա երաց զտապանակն և գտաք անգ զսուրբ Մկրտիչն և զթովմաս Առաքեալ և զնախավկայն Ստեփաննոս. զորս յառաջնոց հարանց բերեալ էր յուղղափառացն սրբոյն Երուսաղէմի.» (Կղևկայց. Բ. գիրք, էջ 419—420): E. W. Books անգղիացին հրատարակած է An Armenian visiteur to Jerusalem խորագրով գրուած մը Յովսէփ Անապատականի մասին անգղ. թերթի մը մէջ, ուր ան կը հաստատէ զրոյցին յօրինման թուականը և կուտայ անոր վերլուծումը (Հա, 1896, էջ 185):

**ՅՈՎՍԷՓ (Մհ. Եռսուփ) ՍԱՀԱԹՃԵԱՆ, ՊՈՂՍԵՅԻ, ՈՐԴԻ ԶՈՒԽԱՆՆԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ.**— 1850ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքին այցելութեան առթիւ Երուսաղէմի մէջ կը վախճանի և կը թաղուի Ս. Փրկչի վանքը, երախտաւորներու շարքին մէջ. իր տապանագիրն է հետեւեալը.

«Այս է տապան հանգստեան Ստամպուլցի Չուխաճի մանտեսի Յովհաննէսի որդի հոչակաւոր Սահաթճի մահտեսի Յովսէփ աղայ բարեպաշտ իշխանին և մեծի բարեկամի սրբոյ Աթոռոյս, սր փոխեցաւ ի Քրիստոս թուին ՌճՂԹ (=1750) նոյեմբերի իթ. յօրն Հինգշաբթի և մեծ սուգ եթող ընտանեացն և ամենայն զբարին կամեցողաց սրբոյն Յակոբայ որ ընթեր-